ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ /1-ին/

«Վայտ Սթոն» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի Ավշար բնակավայրի վարչական տարածքում գտնվող ՀՀ Արարատի մարզի Արարատի տրավերտինների հանքավայրի արևմտյան տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ հանրային քննարկումներ /1-ին քննարկում/:

2025թ. ապրիլի 15-ին ժամը 12:00-ին ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի Ավշար բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «Վայտ Սթոն» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի Ավշար բնակավայրի վարչական տարածքում գտնվող ՀՀ Արարատի մարզի Արարատի տրավերտինների հանքավայրի արևմտյան տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ հանրային քննարկումներ:

Հանրային քննարկումներին մասնակցում էին ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի Ավշար բնակավայրի վարչական ղեկավար Ա.Զաքարյանը,Արարատ համայնքի ղեկավարի տեղակալ՝ Ա.Բաղդասարյանը «Վայտ Սթոն» ՍՊԸ-Ի տնօրենը, համայնքի և բնակավայրի բնակիչներ:

Ելույթ ունեցան

ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի Ավշար բնակավայրի վարչական ղեկավար Ա.Զաքարյանը, նշեց, որ համայնքում իրականացնում են 1-ին հանրային քննարկումները: Համայնքը պատշաճ ծանուցված է, ամեն ինչ նորմայի սահմաններում է, մենք շահագրգռված ենք, որ իրակացնեն նման գործունեություններ, որ որոշակի ընտանիքներ աշխատեն, բարելավվի համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը:

«Վայտ Սթոն» ՍՊԸ-Ի բնապահպանական խորհրդատուն ներկայացրեց ՀՀ օրենսդրությունը, իր մտադրությունները և նշեց, որ համաձայն << Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին >> ՀՀ օրենքի պահանջների հանքարդյունահնման աշխատանքները ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության, այդ նպատակով էլ կազմակերպվել և իրականացվում են այս հանրային քննարկումը, եթե համայնքը կտա իր նախնական համաձայնությունը ապա արդեն ընկերությունը կսկսի նախագծային աշխատանքները:

Ելույթ ունեցան համայնքի բնակիչներ, ովքեր հնչեցրեցին իրենց հուզող հարցերը,և ստացան սպառիչ պատասխաններ ընկերության կողմից:

Հնչեցին հարցեր կապված սոցիալական ծրագրերի, աշխատատեղերի վերաբերյալ, ընկերությունը հավաստեց, որ համայնքի հետ կքննարկվեն և կնախատեսվեն սոցիալական ծրագրեր, ինչպես նաև աշխատողները հնարավորինս կլինեն մոտակա բնակավայրից:

Ամփոփելով հանրային քննարկման արդյունքները՝ մասնակիցները որոշեցին հավանություն տալ «Վայտ Սթոն» ՍՊԸ-Ի կողմից նախատեսվող ՀՀ Արարատի մարզի Արարատի տրավերտինների հանքավայրի արևմտյան տեղամասում օգտակար հանածոյի հանքարդյունահանման աշխատանքներին:

Կից ներկայացվում է մասնակիցների ցանկը՝ 1 թերթ:

Քննարկումների պատասխանատու և վարող՝ Ա.Բաղդասարյան

ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի ղեկավար՝ Ա.Ավետիսյան

Ձեռնարկող՝
«Վայտ Սթոն» ՍՊԸ-Ի տնօրեն՝ Ռոման Եղիազարյան